

ԱՐԽԱԳԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՏԽՈՒՐ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ՍԵՐԳԵՅ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Արխագիայի հայկական դպրոցների ավելի քան մեկդարյա պատմության մասին տարիների ընթացքում հարուստ նյութեր են կուտակել, բայց, ավաղ, դրանք ճշտելու, ամփոփելու և հրատարակելու ժամանակ չեն ունեցել: Արխագիայի հայկական կրթօջախների մասին, ուստի որոշեցի ներկայացնել վերջին երկու տարվա տվյալները: Բայց, մինչ այդ, համեմատության համար կնշեմ մի քանի թվեր:

Այսպես, 1949-50 ուստարում Արխագիայում գործել է 118 հայկական դպրոց (միջնակարգ, ութամյա և տարրական), որոնք ունեցել են 11. 494 աշակերտ: 20 տարի անց՝ 1969 թ. կար 105 հայկական դպրոց, որից 20-ը՝ միջնակարգ, 38-ը՝ ութամյա, մյուսները՝ տարրական: Դրանցում սովորում էր 13.500 աշակերտ: Եվս 20 տարի անց՝ 1989 թ., երբ Արխագիայում բնակվում էր 76.541 հայ, կրթական հաստատությունների թիվը մեծանալու փոխարեն կիսով չափ կրճատվել էր, մնացել էր ընդամենը 53 դպրոց:

1992-93 թթ. վրաց-աբխազական պատերազմն անբուժելի վերքեր հասցրեց աբխազահայությանը: Արտագաղթի պատճառով կտրուկ նվազեց հայերի թիվը: Պատերազմի ավարտից տասը տարի հետո՝ 2003 թ., երկրում բնակվում էր 44.869 հայ, գործում էր 35 հայկական դպրոց, 10-ը՝ միջնակարգ, մյուսները՝ ութամյա կամ տարրական: Բոլորը միասին ունեին ընդամենը 2828 աշակերտ: Նման կրճատման պատճառներից մեկն էլ հայ երեխաներին ռուսական դպրոցներ տալն էր: Հետագայում հայկական դպրոցները սկսեցին առարկաների մի մասն անցնել ռուսերեն, որպեսզի ռուսերեն լավ սովորելու պատրվակով ռուսական դպրոցներ գնացող հայ երեխաների ծնողներին համոզեն նրանց

հայկական դպրոց տան: 2009-2010 ուստարում դպրոցների թիվը 32 էր (26 միջնակարգ, 6 ոչ լրիվ միջնակարգ), աշակերտներինը՝ 1972: Հաջորդ տարի կրկին մեկ դպրոց է փակվում, ուստի 2011-12 ուստա-

մարդահամարներում չի հաշվառված:

Պետք է շեշտեն, որ հայկական դպրոցներում միայն տարրական դասարաններում են դասերն անցկացնում հայերեն: Ավելի բարձր դասարաններում



Սուխումի Հովհ. Թումանյանի անվան դպրոցը



Գագրայի Խ. Աբովյանի անվան դպրոցը

րում Արխագիայում գործում էր արդեն 31 հայկական դպրոց, 1964 աշակերտով, 2012-2013 ուստարում, երբ հայության թիվը 42.000 հազար էր, այդ 31 հայկական դպրոցներ էին հաճախում 2008 աշակերտներ:

Մեր օրերում, Արխագիայում, ենթադրաբար, բնակվում է շուրջ 45.000 հազար հայ: Կան նաև Հայաստանից արտագաղթած բազմաթիվ հայեր, որոնց գալի մասը չի գրանցված և

հայերեն են դասավանդվում հայոց լեզու, գրականություն, Հայաստանի պատմություն առարկաները: 5-րդ դասարանից սկսած մյուս առարկաները Ռուսաստանի ուսումնական ծրագրերով և դասագրքերով դասավանդվում են ռուսերեն, թեև, բարեբախտաբար, կան դպրոցներ և ուսուցիչներ, ովքեր այդ առարկաների մի մասը դասավանդում են երկու լեզուներով էլ:

Ներկայացնում եմ Արխագիայի հայկական համայնքի ղեկավար Փալուստ Տրապիզոնյանի և աշխատակցուհի Անահիտ Շախիկյանի աջակցությամբ հավաքված 2016-17 և 2017-18 ուսումնական տարիների դպրոցների և աշակերտների տվյալները, ինչի համար ցանկանում եմ իմ երախտագիտությունը հայտնել նրանց:

Սուխում քաղաք, Սուխումի շրջան

1. Սուխում քաղաքի Հովհ. Թումանյանի անվան N 9 միջն. դպրոց, տնօրեն՝ Ազնիվ Քեյսան, 25 ուսուցիչ, 2016 -17 ուստարի՝ 217 աշակերտ (111 աղջիկ, 106 տղա), 2017-18 ուստարի՝ 199 աշակերտ:

2. Յաշտուխա գյուղի N 1 միջն. դպրոց, տնօրեն՝ Հայկազ Ավետյան, 20 ուսուցիչ, 2016 -17 ուստարի՝ 60 աշակերտ (34 աղջիկ, 26 տղա), 2017-18 ուստարի՝ 61 աշակերտ:

3. Յաշտուխա գյուղի N 2 միջն. դպրոց, տնօրեն՝ Ռոբերտ Ավդյան, 18 ուսուցիչ, 2016 -17

Կարապետյան, 11 ուսուցիչ, 2016-17 ուստարի՝ 24 աշակերտ (10 աղջիկ, 14 տղա), 2017-18 ուստարի՝ 24 աշակերտ:

6. Վերին Էշերա գյուղի միջն. դպրոց, տնօրեն՝ Լևոն Ավետիսյան, 9 ուսուցիչ, 2016-17 ուստարի՝ 19 աշակերտ (13 աղջիկ, 6 տղա), 2017-18 ուստարի՝ 19 աշակերտ:

Գուդաուխայի շրջան

1. Փսիդիսա գյուղի Ս. Խզարյանի անվան միջն. դպրոց, տնօրեն՝ Կարա Քեյսան, 17 ուսուցիչ, 2016 -17 ուստարի՝ 69 աշակերտ (33 աղջիկ, 36 տղա), 2017-18 ուստարի՝ 69 աշակերտ:

2. Մծարա գյուղի միջն. դպրոց, տնօրեն՝ Արմեն Սարգսյան, 9 ուսուցիչ, 2016-17 ուստարի՝ 22 աշակերտ (9 աղջիկ, 13 տղա), 2017-18 ուստարի՝ 21 աշակերտ:

3. Պրիմորսկոյե գյուղի N 2 միջն. դպրոց, տնօրեն՝ Ալիկ Սեֆերյան, 18 ուսուցիչ, 2016-17 ուստարի՝ 75 աշակերտ (30 աղ-



ուստարի՝ 66 աշակերտ (33 աղջիկ, 33 տղա), 2017-18 ուստարի՝ 69 աշակերտ:

4. Գումիստա գյուղի միջն. դպրոց, տնօրեն՝ Անահիտ Կալայան, 20 ուսուցիչ, 2016-17 ուստարի՝ 85 աշակերտ (37 աղջիկ, 48 տղա), 2017-18 ուստարի՝ 88 աշակերտ:

5. Ներքին Էշերա գյուղի միջն. դպրոց, տնօրեն՝ Արմեն

ջիկ, 45 տղա), 2017-18 ուստարի՝ 78 աշակերտ:

4. Ագարակ (այժմ՝ Ամծըկ-խուա) գյուղի միջն. դպրոց, տնօրեն՝ Շամիրամ Քեյսան, 14 ուսուցիչ, 2016 -17 ուստարի՝ 62 աշակերտ (26 աղջիկ, 36 տղա), 2017-18 ուստարի՝ 52 աշակերտ:

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Գուլիփիշի շրջան

Գագրայի շրջան

1. Գագրա (այժմ՝ Գագրիփշ) քաղաքի և Արմավիրի անվան N 3 միջն. դպրոց, տնօրեն՝ Ամալյա Կապիկյան, 21 ուսուցիչ, 2016 - 17 ուստարի՝ 174 աշակերտ (90 աղջիկ, 84 տղա), 2017-18 ուստարի՝ 164 աշակերտ:

2. Մախադիր գյուղի N 2 միջն. դպրոց, տնօրեն՝ Հակոբ Օհանյան, 17 ուսուցիչ, 2016 -17 ուստարի՝ 77 աշակերտ (41 աղջիկ, 36 տղա), 2017-18 ուստարի՝ 74 աշակերտ:

3. Ցանդրիփշ (նախկին՝ Գանթիաղի) գյուղի Ա. Իսահակյանի անվան N 1 միջն. դպրոց, տնօրեն՝ Ռիմա Փափազյան, 23 ուսուցիչ, 2016 -17 ուստարի՝ 173 աշակերտ (89 աղջիկ, 84 տղա), 2017-18 ուստարի՝ 182 աշակերտ:

1. Գանախլեբա (այժմ՝ Նահա) գյուղի միջն. դպրոց, տնօրեն՝ Օլեգ Սահակյան, 12 ուսուցիչ, 2016 -17 ուստարի՝ 45 աշակերտ (30 աղջիկ, 15 տղա), 2017-18 ուստարի՝ 42 աշակերտ:

2. Պոբեդա (Բազաժյաշտա) գյուղի ոչ լրիվ միջն. դպրոց, տնօրեն՝ Գրիգոր Ալեքսյան, 15 ուսուցիչ, 2016-17 ուստարի՝ 32 աշակերտ (7 աղջիկ, 25 տղա), 2017-18 ուստարի՝ 34 աշակերտ:

3. Շահումյանովկա (այժմ Ցըկըբն) գյուղի միջն. դպրոց, տնօրեն՝ Վոլոդյա Կոնդակչյան, 29 ուսուցիչ, 2016-17 ուստարի՝ 130 աշակերտ (71 աղջիկ, 59 տղա), 2017-18 ուստարի՝ 132 աշակերտ:

4. Վերին Գուլիփիշ գյուղի միջն. դպրոց, տնօրեն՝ Էդուարդ Ծատուրյան, 15 ուսուցիչ, 2016-



4. Լափստա (Լափստարիսա) գյուղի N 1 միջն. դպրոց, տնօրեն՝ Ռուզաննա Ուզունյան, 23 ուսուցիչ, 2016-17 ուստարի՝ 121 աշակերտ (60 աղջիկ, 61 տղա), 2017-18 ուստարի՝ 116 աշակերտ:

5. Բզիբ գյուղի N 3 միջն. դպրոց, տնօրեն՝ Ասյա Քեշեբյան, 16 ուսուցիչ, 2016 -17 ուստարի՝ 88 աշակերտ (41 աղջիկ, 47 տղա), 2017-18 ուստարի՝ 96 աշակերտ:

6. Ալահաձիի գյուղի Հովհ. Թումանյանի անվան N 2 միջն. դպրոց, տնօրեն՝ Անահիտ Քորյան, 15 ուսուցիչ, 2016 -17 ուստարի՝ 70 աշակերտ (39 աղջիկ, 31 տղա), 2017-18 ուստարի՝ 71 աշակերտ:

17 ուստարի՝ 52 աշակերտ (19 աղջիկ, 33 տղա), 2017-18 ուստարի՝ 47 աշակերտ:

5. Փշապ (այժմ Ծանրեկուար) գյուղի միջն. դպրոց, տնօրեն՝ Մանուկ Ջիդարյան, 25 ուսուցիչ, 2016-17 ուստարի՝ 135 աշակերտ (65 աղջիկ, 70 տղա), 2017-18 ուստարի՝ 140 աշակերտ:

6. Մարխաուլ (Մաչարա) գյուղի միջն. դպրոց, տնօրեն՝ Եվա Քեհյան, 21 ուսուցիչ, 2016 -17 ուստարի՝ 102 աշակերտ (46 աղջիկ, 56 տղա), 2017-18 ուստարի՝ 105 աշակերտ:

Ցավոք, այս ուսումնական տարում առաջին դասարաններ չունեն Վերին Էշերայի և Ագարակի դպրոցները: Այսպիսով, 2016-17 ուստարում Արխագիայի հայկական 24 դպրոցների ուսուցիչների թիվը 428 էր, աշակերտներինը՝ 2023, իսկ 2017-18 ուստարում՝ 2016:

Օջամհիրայի շրջան

1. Լաբրա գյուղի միջն. դպրոց, տնօրեն՝ Սեյրան Պալազյան, 14 ուսուցիչ, 2016-17 ուստարի՝ 52 աշակերտ (28 աղջիկ, 24 տղա), 2017-18 ուստարի՝ 56 աշակերտ:

2. Արակիչ գյուղի միջն. դպրոց, տնօրեն՝ Գեղանուշ Կանսուզյան, 17 ուսուցիչ, 2016-17 ուստարի՝ 73 աշակերտ (44 աղջիկ, 29 տղա), 2017-18 ուստարի՝ 77 աշակերտ:

ՈՒՂՈՒՄ
Թերթի նախորդ համարում հրապարակված «Կոմիտասի դաքնկեր Շահան-Սիմոնը՝ Արխագիայում ուսուցիչ» հոդվածում Լափստարիսա գյուղի դպրոցի աշակերտների թիվը պետք է տպվեր 116, այնինչ, սխալմամբ տպագրվել է հարևան Գանթիաղի (Ցանդրիփշ) գյուղի դպրոցի աշակերտների թիվը՝ 182:

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ ԲԱՐԲԱՌԻՍ ՄԱՍԻՆ

Ծովածո պահից լսել եմ իմ՝ համշենահայերի բարբառը: Բնականաբար, առաջին իմ բառերն արտաբերել եմ բարբառով: Մայրս պատմել է, որ առաջին իմ բառը եղել է «կուզիմ» բառը, որն ավելի քան տարօրինակ է, որովհետև հետագայում այդ բառը գիտակցորեն համարյա անհետացել եմ իմ բառապաշարից, քանի որ հասկացել եմ. ուզելուց առաջ անհրաժեշտ է ՏԱԼ: Ու այդպես էլ ապրել եմ՝ տալով ու երբեք չուզելով, համարելով, որ շատ քիչ է տվածս ուզելու համար...

Մինչև չորս տարեկան մեծանալով բացառապես համշենահայերի շրջապատում՝ գաղափար անգամ չեմ ունեցել ռուսերենի կամ մեկ ուրիշ օտար լեզվի մասին: Այն ժամանակներում ոչ հեռուստացույց ենք ունեցել, ոչ էլ ռադիո, որպեսզի գոնե լսելի Համշենի բարբառից բացի այլ լեզուներ: Զորս տարեկանից հետո ընտանիքով տեղափոխվել ենք մեկ այլ գյուղ, որտեղ կային հույն և մեզրել հարևաններ: Երեխաների հետ շփվելու ընթացքում որոշ չափով սովորեցի հունարեն, վրացերեն և ռուսերեն, սակայն գրական հայերենն առաջվա նման ինձ համար անծանոթ էր:

Որքան մեծ եղավ զարմանքս, երբ առաջին դասարանում մեր ուսուցչուհին սկսեց խոսել մեզ հետ ինձ համար անծանոթ հայերենով՝ գրական արևելահայերենով:

Պիտի ասեմ, որ ես մյուս համշենահայ երեխաներից շատ արագ սովորեցի գրական հայերենը, գուցե՝ լեզուների նկատմամբ առանձնահատուկ հետաքրքրություն ունենալուս պատճառով:

Երբ գրական հայերենին սկսեցի նույնքան լավ տիրապետել, որքան բարբառիս՝ այլևս բարբառով չէի խոսում անգամ տանը, զարմացնելով ծնողներին:

Եվ դրա պատճառը մեկն էր. ինձ թվում էր, թե համշենահայերի բարբառը չափազանց կոպիտ է գրականի համեմատությամբ և ամաչում էի խոսել: Առաջ ընկնելով ասեմ, որ հետագայում, դեռևս պատանի հասակում, երբ դպրոցի բարձր դասարանների աշակերտների խմբի հետ Հայաստան այցելեցի և հայաստանցիների մոտ ներկայանալով որպես համշենցի հայ, նրանց իսկ խնդրանքով՝ խոսեցի իմ բարբառով, ծիծաղի հեղեղի տակ մնացի, մեկնաբանելով այդ ծիծաղը որպես ծաղր բարբառիս հասցեին և այլևս բարբառով չխոսելու որոշումս ավելի հաստատուն դարձավ:

Սակայն վերջին դասարանում, երբ հայ գրականության դասաժամերին սկսեցինք ուսումնասիրել արևմտահայ գրականությունը՝ իմ ուրախությանը

չափ չկար: Ես արևմտահայերենը սիրեցի ավելի շատ, քան արևելահայերենը:

Սովորությանս համաձայն՝ վերլուծեցի զգացածս: Ու հասկացա, որ պատճառը մեկն է. նմանություն էի գտել Համշենի բարբառի և արևմտահայերենի միջև: Համոզմունքս ավելի ամրացավ, երբ Երվանդ Օտյանի երկերը ընթերցեցի, որտեղ հիմնականում հերոսները խոսում են արևմտահայերենի ոչ գրական լեզվով:

Դրանից հետո Համշենի բարբառով խոսել ոչ միայն չամաչեցի, այլ շեշտված խոսում էի միայն բարբառով:

Բարբառով առաջին գրավոր նմուշների հետ ծանոթացա պատահական ծեռքս ընկած համշենահայ գրողների մի ժողովածուի միջոցով, որը կարծեմ «Համշենի այգաբաց» էր կոչվում, հիմա չեմ հիշում:

Ճիշտն ասած, Պարույր Սևակի, Հովհաննես Շիրազի, Եղիշե Զարենցի, Սիամանթոյի, Պետրոս Դուրյանի և այլոց պոեզիայով բերնիբերան լցված Հոգիս Համշենի բարբառով գրված, գուցե տաղանդավոր գրված բանաստեղծություններում գեղարվեստական արժեք չտեսավ: Դրանք կարդում էի ավելի զավեշտալի գիր տեսնողի պես, ժպտալով ու ծիծաղելով:

Նորություն էր ու շատ հետաքրքիր էր մինչև այդ միայն բանավոր հնչողությամբ լսածս լեզուն տեսնել գրավոր: Անգամ կարդալ դժվարանում էի:

Շատ ավելի հետո՝ հասուն տարիքում, հասկացա, որ Համշենի բարբառով լույս տեսած և իմ առաջին կարդացած այդ գրքույկը մեր մշակութային գոհարներից է: Ավելի ուշ ինքս փորձեցի ստեղծագործել բարբառով:

Հանուն ճշմարտության պիտի ասեմ, որ ապրելով տարբեր ազգերի ներկայացուցիչների մեջ, որպես հաղորդակցության արագ ու հեշտ միջոց խոսել եմ ռուսերեն: Այդ իսկ պատճառով մոռացել եմ հայերեն շատ բառեր: Բարբառս ավելի շատ եմ մոռացել, կամ ավելի ճիշտ կլինի ասել՝ կորցրել, քանի որ գրական հայերենով գրքեր կարդալու հնարավորություն եմ ունեցել և վերականգնել մոռացածս, իսկ բարբառս մնացել է միայն կենցաղային լեզվիս մեջ, այն էլ՝ մարդ չի մնացել որի հետ խոսեմ ու վերհիշեմ:

Ջարթոնք ապրելու նման այս վերջին երկու տարում սկսեցի հնարավորինս շատ գրել բարբառով: Անգամ փորձ արեցի թարգմանել արևմտահայերենից Պետրոս Դուրյանի և Միսաք Մեծարենցի հայտնի բանաստեղծություններն իմ բարբառով:

Համշենի բարբառի հետ գրավոր առնչվեցի նաև մեծարգո Սերգեյ Վարդանյանի՝

մեծ մտավորականի և իսկական հայրենասերի գերմարդկային ջանքերով հրատարակվող «Զայն համշենական» պարբերականի մեջ, որտեղից էլ տեղեկացա աշխարհի տարբեր անկյուններում ապրող իմ հայրենակից քրիստոնյա և մահմեդական դարձած համշենահայերի կյանքի մասին, նրանց հույզերի և հույսերի մասին, նրանց անկոտրում կամքի և հավատի մասին առ այն, որ մոռացված չեն ոչ մի հայի կողմից:

Ցավալիմ այն է, որ թերթը կարդացողները, արձագանքողները, որոնք շատ-շատ են, մեծ մասամբ համշենցիներ չեն...

Մեծ ուրախությամբ ունկնդրում եմ «Համշենական գրուցարան» ռադիոհաղորդաշարը, որի ծնունդը և պարբերական թողարկումները նույնպես հարգելի Սերգեյ Վարդանյանի մտահղացումներից են:

Այդ ռադիոհաղորդման առաջին իսկ ելևէջներից Հոգիս պեկոծվում է, և այլ կերպ չէր էլ կարող լինել, քանի որ այն սկսվում է համշենահայերին հատուկ շատ տխուր մի մեղեդու հնչյուններով, որոնք ուղեկցվում են անմահ բարբառիս բերանացի խոսքերով՝ հնչեցված անծանոթ համշենցի կնոջ կողմից, պեկոծելով ոչ միայն իր հարազատ երանգով, այլև ասածի իմաստով, որը ոչ այլ ինչ է, քան հայկական կարոտի բառամարմին ստացած ցավ...

Պարբերականի և ռադիոհաղորդաշարի բոլոր, շեշտում եմ՝ ԲՈԼՈՐ նյութերը ոչ միայն հետաքրքիր են և անհրաժեշտ ամենքիս համար, մանավանդ՝ ծագումով համշենցի հայերիս համար, այլև կատարում են ազգը համաձուլող, նրան կուռ ու միահամուռ մնալու կոչող խոսնակի դեր:

Խոսքս ավարտում եմ հետևյալով. ցանկացած անհատ մի ազգի ծնունդ է: Ցանկացած ազգ գոյանալով իսկ դառնում է մարդկային տեսակի գոհար, միայն իրեն հատուկ լեզվով ու մշակությամբ:

Մենք՝ հայերս, Երկիր մոլորակի այդ հարստության մեջ գոհարների ամենաարժեքավորներն ենք, քանի որ ունենք ոչ միայն հնագույն մշակույթ, այլև ոսկուց էլ թանկ բազմաշերտ բարբառային լեզու...

Զկորցնենք այն, ի հեճուկս նրանց, ովքեր կուզենային որ... կորչեր հայոց լեզուն... ընդհանրապես: Ուստի «Զայն համշենականի» ընթերցողներին եմ ներկայացնում Համշենի բարբառով գրած իմ բանաստեղծություններն ու նրանց գրական թարգմանությունները:

ՌՈԶԱ ԽԱՍՏՅԱՆ
Հայաստանի գրողների միության անդամ,
ՌԴ, Աղդղեական Հանրապետություն, ք. Մայկոպ

ՌՈԶԱ ԽԱՍՏՅԱՆԻ ՆԱԽՇԵՆԻ ԲԱՐԲԱՌՈՎ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԶԻՍ ՈՒՎԷԿՈՒ ԴԱԼ ՄԻ

Ինձի քօ՛վըդ բահա, զիս թողուլ մի՛
նրեկ, Սա հազ գընիս նա զիս՝ ինձի քօ՛վըդ
բահա, Նըն նեղիլ մի՛ ինձի մարած ձիգարի
քեւ, Մէ մալ դէսար նա, ա՛խ, մէգը դէսալ՝
առաւ... Առաւ-կօլիծ նօրըն, քաշիծ-դարաւ
ույ նէս, Հօմ ու հեղըս առաւ, խէլըռիծաւ
ինձմըն, Բիռդան ճահաձ բախտին բալկի
հավդած ալ հէճ, Կիղնաս տուխ, ըն ինձի գաթօղ ա
փէշէրըն... Ինձի յօնըդ բահա, քեզի խանգարիլ
չի՛մ, Ուսուլ մը ճըվարին բիդու չըղած
բուճխդ, Շաղ ուզին ալ քեզմըն՝ զիս ուվէկու դալ
մի, Ինձմըն բիդուն՝ չունի՛ս, ախ, պած
արա աճվիդ...

ԻՆՉ ՈՉ ՄԵԿԻՆ ՉՏԱՍ

Ինձ քո կողքին պահիր, ինձ մի՛ թող
ոչ մի տեղ, Եթե սիրում ես ինձ՝ քո կողքի՛ն ինձ
պահիր, Հանգած սիգարի պես չշարտես ինձ
դեն, Մեկ էլ տեսար, մեկը տեսաւ ու
տարաւ ինձ: Առաւ, վառեց նորից ու ներքաշեց իր
մեջ, Համ ու հոտըս առաւ, խելագարվեց
ինձնով, Միանգամից բախտին չհավատաց
գուցե, Բայց իմացիր, որ նա ինձ կկապի
իրմով: Պահիր ինձ քո կողքին, չեմ խանգարի
քնալ, Կծվարեմ անպետք անկյուններից
մեկում, Շատ ուզեմ էլ քեզնից՝ ինձ ոչ մեկին
չտաս, Ես պետք եմ, պե՛տք եմ քեզ, ախ,
աչքերդ բաց:

ԱՍ ԱԼ ԻՍՄՈՒՆ

Թագ մը լլվե՛ր՝ կըլխուս տընէյ, էշտայ-
գօյնէյ սօկըղին, Խաս ու դումաշ հալալ հակնէյ, վըրըն
չաշէյ հիճ մէզին, Օլըրվէյը՝ քինտըս հավուն, ըզգայ
ինձի թակուհի, Մաշտիկ զարմէնայնը մէ մը, ասէյն
տա. «Աս վէ՞վ գըլլի...»: Յէս թագ չունիմ՝ տընօղ չիկա, սօկաղն
ալ շաղ ջօռէդ ա, Խաս ու դումաշ հալալ չունիմ՝ հակուս
խըշիյ ֆիստօն ա, Քինտըս հալըն հօնուշ չիղիմ՝ դայմա
նէրկէվ գաշիմ յէս, Ուվէկ զարմըծած չա վըրաս,
զարմընօղը յէս իմ, յէ՛ս... Պարէ լաճագըս յեղ գաթիմ մօյս թէս՝
հօնշէնավարի,

Ըմըն հալկը ույ ձառն ունի ծօրին
նէսը յա սարին, Խօղուն վըրըն կըլղօրվէլըդ, հալըն
ինտուս նէ՞ր գաշիս, Քու ուզածըդ ինձ ա, գընիզ, քու
շաբգաղ տուս նէ՞յ կէլլիս... Համօզէծի ինկըս ինձի՝ թագ
ուգուշաս վագ էգա, Էլա աբույ մը էպէծի, էգա կըրուշիս
նըստա... Թագ չունիմ նա՝ բիդու յալ չա, նա ալ
դումաշ ա բիդու, Արիգըս ինձի հազ գընա՝ զիս
հավըրծու՛ց ակվընծու...

ՄԱ ԷԼ ԱՅՍՊԵՍ

Թագ լինե՛ր՝ գլխիս դնեի ու կանգնեի
փողոցում, Գեղեցիկ շորեր հագնեի, չնայեի ոչ
մեկու, Պատվեի՛ քիթս երկինք ու զգայի ինձ
թագուհի, Ջարմանային մարդիկ մի պահ,
ասեին. «Ո՞վ կլինի...»: Ես թագ չունեմ՝ դնող չկա, փողոցն էլ
շատ կեղտոտ է, Ես գեղեցիկ շորեր չունեմ, հագիս
մաշված դեյրա է, Քիթս երկինք հանել չունեմ, միշտ
նեղքս եմ նայում ես, Ոչ ոք չի զարմացել վրաս, զարմացողը
ես եմ, ե՛ս... Գլխաշորս ետ կապեմ ես, մորս պես՝
համշենուհու, Ամեն թռչուն իր ծառն ունի ձորի մեջ
կամ էլ սարում, Հողի վրա գըրվելուց ինչու՞ երկինք ես
նայում, Քո ուզածը ի՞նչ է, ա՛յ կին, ելնում ես
շապկիցդ՝ ու՞ր... Համօզեցի ես ինքս ինձ, թագ
ուզելուց վագ եկա, Ելա ու ճաշ պատրաստեցի, եկա
գրելուս նստա, Թե թագ չունեմ՝ ինձ պետք էլ չէ, ոչ էլ
ատլաս եմ ուզում, Ամուսինս սիրում է ինձ՝
հավատացրե՛ց այս առտու...

ԻՆՃԻՄ ԸՂԱՉ Ա...

Ինճի՛մ ըղած ա, Ինչի՛մ ձըռած ա, Ինճի՛մ ջըխկած ա, Հիճ մէզ մաշտումը քէլա չըղըվօղ
Բիջիզ, զավալիզ ազադուտինըս՝ Տի մը գօրած ա, Մէգը կօխծած ա, Մէգը բահած ա, Մէգը մօռծած ա, Հընօր իմ նէսաս գըրագ հօնած ա...
Դիհա, մարա՛ձ իմ, Ալ ինձօ՞յ կըրիմ... Իմ չօննըծածըս՝ ազադուտինըս յէ՛դ
դըվէկ ինձի...

ՄԻ ԲԱՆ ԵՂԵԼ Է

Մի բան եղել է, Մի բան ծովել է, Մի բան ճեղքվել է, Ու ոչ մի մարդու վնաս չսվող
Փռքիկ ու խղճուկ ազատությունն իմ՝ Մի տեղ կորել է, Այն գողացել է,

Ոմն՝ պահել է, Նա մոռացել է, Որ դա իմ միջի հուրը հանել է... Ահա, հանգել եմ, Էլ ինչպե՞ս գրեմ... Չունեցածը իմ՝ ազատությունս ե՛տ
վերադարձրեք...

ՄԷՆԿ

Կալը էրգու օճխայ դարաւ, Մէգը տուն իս, մէգը՝ յէս, Ջագտի կիրը աղմուն աստաւ. «Յա Բողէս ա, յա Բեղէս»։ Տուն ուրիշ տի, յէս ուրիշ դէդ, Օ՞րի իրայ ջօնճիծակ, Մէզին ջօմպուն քարէյ, փըշէյ, Միգալինը՝ մանուշագ։ Ջօմպըն էրգըն, գլանկէյնիս՝ գայջ, Յէս չըխօսիմ, տուն ասա, Չուռ աշխարը չըշիղգէծակ, Ինճկան կուզիս՝ խաղ ասա...

ՄԵՆՔ

Գայլը երկու ոչխար տարաւ, Մեկը դու ես, մեկը՝ ես, Ճակատագիրն ունի մի խոսք. «Կամ Պողոս ես, կամ Պետրոս...»: Դու ուրիշ կողմ, ես ուրիշ տեղ, Ինչու՞ իրար իմացանք, Մեկի ճամփին քար ու փուշ է, Մյուսինը՝ մանուշակ։ Ճամփան երկար, իսկ կյանքը՝ կարճ, Ես չխոսեմ, դու ասա, Ծուռ աշխարհը շտկելու չէ, Ինչքան տաղեր էլ ասվեն...

ՍԸՐԸՆ Է ԳԱՉ Ա

Ըմըն ինճ խաս ա։ Աշա՞, արե՛վ գա, Աշնընծու քօմին դահա դաղիլ չի՛, Դահա դըղակը սինօռին վըրա Գօյնաձ ին հօնգիստ, իրած
մէճկմէճկի։ Դահա աշխարը դուվատի ա ուր Ագահ ու օնգուշտ ուղօղնուն առաջ, Դահա քառդէզին կըձէյն ին ձուռ-մուռ, Դահա օջախնուն մըխա գու գըրագ։ Դահա բաբագնի դէղմը ծընվին գու, Իրայ սիրին գու դահա ճահէլնին, Դահա էխոյայնին աղատ բահին գու՝ Սօյը փօխուշի ջօմպը մը գըլլի... Ըմըն ինճ խաս է։ Կօյա։ Խապվինք
հէ՛ճ, Գըմընգնուս էտտին ձախին գու մէզի, Ախպայն ախպօրը յէ՞պ ըլլօղ ա մէճք, Սըրըն էգաձ ա, ախպըղդակ, գէյճի՛կ...
ԺԱՄԸ ԵԿԵԼ Է

Ամեն ինչ լավ է։ Նայի՞ր, արև կա, Քամին էլ աշման դեռ մեզ չի դադում, Դեռ տղաները սահմանի վրա, Կանգնած են հանգիստ, իրար
մեջքմեջքի։

Աշխարհն ամուր է դեռևս մնում Անկուշտ և ագահ ուտողների դեմ, Դեռ քարտեզի էլ գծերն են ծուռ-մուռ, Կրակ ունեն դեռ օջախները մեր։ Դեռ նորածիններ են ծնվում մի տեղ, Դեռ ջահելները սիրում են իրար, Ծերացողները աղաթ ունեն դեռ՝

Տեսակ փոխելու ժամանակ դեռ կա։ Ամեն ինչ լավ է։ Իբր։ Չխաբվե՛նք, Մեր թիկունքներում վաճառում են մեզ, Եղբայրը եղբորը էլ ե՞րբ լինի մեջք, Ժամը եկել է, եղբայրներ, ելնե՛նք...

ԼՈՒՍԸ ՊԱԾՎԻԾԱՎ

Այագ կիշեր ա շաղ կիշէյնուն քեւ, Քուն ըլլի չայծի աս կիշէյ ալ յէս, Յատղիս նէս բառգաձ՝ շաղ օլըրվիծա, Ալի քուն ըլլի չայծի, հա քէլա՛։ Էլա դընըն տուս, յերգինկ աշէծի, Գըռօջ լուսնյագին լիզու հօնէծի, Վըրաս ալ չաշից։ Յէս ալ վէ՛վ իմ օր, Քօվը տառնօն գու քատում այագնի... Ընըն, կիղիս տա լուսընուշ նահրից, Քաղակին ձարըն խօրօզ մը գօնճիծ, Փըրընտկած մէ մը մէզին մաշինըն, Լուսնյագը փախաւ այագնուն քօվըն։ Շունիզ մը հաճից բարաբուտինըն, Բալկիտ ալ առտուկ օնօտած էր ըն... Քօմի մը էլալ, օտը ժածիծալ, Ծէռլիս ձիգարըն օղվընուս ընգալ... Հավըն քատումձալ, լուսավօրվիծալ, Մըկլաձ յերգինկը գօմած տեղնիծալ, Չառին արածըն հավկ մը սըլֆըլած, Բայսպայլու ինձի «Պարի լուս» ասած։ Օրը գայտիծալ, փատուրվիծալ զիս, ...Չիղիմ ալ օ՞րի՝ քեզի հիշեծի... Իսա սահատին վօղէյս ալ ըլլիս՝ Տօխ խընդու՛մ օննաս, պարի լու՛ս
քեզի...

ԼՈՒՑԱԸ ԲԱՅՎԵՑ

Աստղագարդ գիշեր՝ շատ այլերի պես, Չեմ կարող քնել այս գիշեր էլ ես, Անկողնում պառկած՝ շատ պատվեցի, Անքնությունն էլ, փորձանք է, է՛լի... Ելա տնից դուրս, երկինք նայեցի, Լուսնի եղջյուրին լեզու հանեցի, Վրաս չնայեց։ Ես այդ ո՞վ եմ որ, Երբ աստղեր սիրում կան նրա կողքին... Ահա, կարծես թե լուսանալ սկսեց, Քաղաքի ծայրից մի աքլոր կանչեց, Փռշտաց մի հատ մեկի մեքենան, Աստղերի մոտից լուսինը փախալ։ Մի շնիկ հաչեց պարապությունից, Գուցե և արդեն սոված է, ծարավ... Օղը տատանվեց, ծնվեց մի քամի Չեռքիս սիգարը ոտքերիս ընկալ... Երկնակամարը իմ լուսավորվեց, Կամացուկ դեղնեց երկինքը մռայլ, Ծառի արանքից մի թռչուն սուլեց, Երևի թե ինձ «Բարի լույս» ասաց։ Օրը արթնացաւ, նա գրկել է ինձ, Չգիտեմ ինչու՞ ես քեզ հիշեցի... Այս ժամին, անգի՛ն, որտեղ էլ լինես՝ Թող խինդ ունենաս, բարի լու՛յսը քեզ...



СТРАНИЦЫ СЕМЕЙНОЙ ИСТОРИИ

СЕРГЕЙ КАЛЕНДЖЯН, доктор экономических наук, заслуженный экономист РФ, декан высшей школы корпоративного управления академии народного хозяйства и государственной службы при Президенте РФ

Наша семья с 1959 жила в г. Гагра. Мои предки по отцовской линии приплыли в порт г. Сухуми (тогда это был Сухумский военный округ в составе Российской империи) в 1907 году из города Орду, расположенного на берегу Чёрного моря, а жили они в красивом горном селе Пёсдепе на холмах рядом с Орду. По рассказам моего дедушки Артака, в годы, когда они там жили, уже были постоянные конфликты с турками. Была и попытка убийства нашей семьи группой турок. Но дедушкин отец, его звали Хачик, очень смелый человек, сумел отстреляться и ранил одного из нападавших. Тогда турки сказали: «Мы с твоей семьёй расправимся завтра ночью». Семья прадедушки была большая и дружная, было 6 детей, младшему 2 года. Учитывая реальную опасность для жизни малышей и всей семьи, в течение следующего дня прадед осуществил успешную их эвакуацию в Сухум на небольшой шхуне. Прадедушка остался в Орду, чтобы решить разные бытовые вопросы: продать дом, домашнюю утварь, скот и организовать переезд своих родителей и родственников. Прабабушка Элмас (в девичестве Манукян) сумела благополучно вместе с малышами добраться до порта Сухум и найти знакомых и близких нашей семье людей. Это путешествие было очень опасным. Многие не доплывали до цели. Нашей семье повезло, надо отметить и личные возможности прадедушки по организации переезда семьи. Через несколько месяцев дедушка Хачик тоже приплыл в Сухум и встретился с семьёй.

От старших я знаю, что наша семья в начале поселилась в Верхнем Эшера, где жили наши крестные Бостанджян. Несколько лет наша семья там жила буквально в шалаше. Затем они перебрались в Каваклуг, это село около Пицунды и построили там дом. В Каваклуге собралось более 200 семей, в основном ордуицких армян. И что интересно, предки моей жены Ашхен тоже оказались в этой деревне. Они из Орду попали в Кавалуг, оттуда в Гагру, а после переехали в Москву. То есть три этапа жизни нашей семьи шли параллельно, чтобы мы с Ашхен встретились в Москве.

Жизнь в Каваклуге была крайне тяжёлой в то время, кругом был лес, свободной земли было очень мало, прокормить семью было очень трудно. Моя прапрабабушка (ее звали Мариам Джансузян, она была дочерью священника) все время просила своего мужа Аракела вернуться в город своего детства и молодости в Орду: «Здесь невозможно жить, я хочу свой дом, свой сад». И к 1915 году (через 8 лет жизни на новом месте) ее сын (мой прадед Хачик) уступил ей и отправил



своих родителей и своего младшего брата Артина назад в Орду к оставшимся там их детям. Информации о том, что начинается геноцид, не было. А там турки схватили их прямо в порту. Когда мне было 10 лет, ко мне на кладбище в Каваклуге, где похоронены наши предки, подошел один человек, его звали Алек, и говорит: «Сынок, ты знаешь, как твой прапрадед Аракел умер? Я это видел. У него развязался чарох, когда их схватили и вели на место сбора, по пути он нагнулся завязать шнур на обуви (чарох), и в этот момент его убили». Судьба бабушки Мариам и ее сына мне неизвестна. Связь оборвалась. Но прадедушка Хачик до конца дней своих ругал себя, что отпустил отца, мать и брата туда, в Орду в их дом.

С кладбищем в Каваклуге, где похоронены мои предки, связана еще одна история. Мы всегда туда ходили на Пасху. Там, раньше была армянская церковь, она была разрушена в 50-е годы. Я об этом не знал. Но когда мне было пятьдесят с лишним лет, я встретил в Сочи одну очень пожилую женщину, которая сказала, что знала моего прадеда Хачика, она говорит: «Сынок (на нашем диалекте - мончес) ты знаешь, что твоя семья в церковь все время ходила в Каваклуге? Я их помню, их было много, и они все вместе ходили в церковь, твой прадедушка и все его дети. Эту церковь разрушили комсомольцы. И когда крест сверху сбивали, он упал на одного из них. Сестра дедушки, которую звали Азиф, нашла внутри разрушенной церкви икону и взяла ее к себе домой». В детстве я видел ту иконку у нее дома, но так и не задал вопрос, откуда она. Но что самое невероятное-когда я женился на Ашхен, у них дома оказалась икона Иверской Божьей Матери в металлической оправе. После выяснилось, что семья моей жены эту икону тоже спасла из той же церкви. Такая вот история.

Когда мои предки обосновались в Каваклуге, им пришлось создавать новый очаг с нуля. Мой прадед Хачик и дедушка Артак были очень трудолюбивыми и предприимчивыми людьми. Бабушка Айгуи имела золотые руки, обеспечивала идеальный порядок и чистоту дома и в хозяйстве. Им удалось вырастить феноменальный сад, лучший в деревне, у них была замечательная мини-ферма. Надо по-

нимать, какие усилия были нужны, чтобы без какой-либо специальной техники выкорчевывать лес и готовить землю, пригодную для садоводства и овощеводства. У нас был очень большой ореховый сад. Главное - саженцы по своему происхождению были из Орду, ведь там производство и продажа орехов было одним из главных видов деятельности. Мне удалось на даче в Подмосковье вырастить прекрасно плодоносящие кусты орешника. Это память о моих предках...

Прошли годы, пришла коллективизация, дедушка Артак вступил в колхоз в числе первых. Однако, как он мне рассказывал, у него был приготовлен маленький чемоданчик с одеждой на случай, если внезапно арестуют. Но, слава Богу, все обошлось.

Я лето проводил в Каваклуге, много работал, помогал по хозяйству и саду. Каждый день вечером дедушка Артак вслух читал армянскую классику и мы слушали пластинки с народными песнями. Учебу в Гагрский средней школе номер 4 я завершил с отличием. Особенно сильным я был по математике, побеждал в республиканской Олимпиаде. Эти успехи во многом были результатом влияния на меня папы, который имел колоссальный авторитет в городе, как сильнейший математик. После поступления на экономический факультет МГУ им. Ломоносова началась моя жизнь в Москве.

Особым драматизмом отличается судьба моих предков по линии моей мамы. В 1885 году они переехали из г. Джиника в Туапсе. Из Туапсе пешком пришли в Лоо, это рядом с Сочи. И там стали одними из первых основателей деревни Нижнее Лоо. В свое время владыка Езрас подарил мне красиво изданную книгу «Церкви дореволюционной России». Я стал смотреть, какие церкви были в районе Сочи и кто их строил. Нашел церковь в Лоо. Смотрю список благотворителей, вложившихся в ее строительство. А там первым в списке-мой прапрадедушка Саак Зейтунян. Он с друзьями и родственниками построил и местную армянскую школу. Недавно я побывал в этой деревне. Это чудные красивые места. В ту пору, в конце XIX века, в этой местности земледелие было развито очень слабо. И мои предки, и другие армяне, приехавшие туда, развивали там производство табака, а также земледелие, садоводство и скотоводство. К сожалению, в годы коллективизации мамы родители попали под раскулачивание, у них отняли дом, имущество и землю. Брат и сестра моей мамы умерли в один день в ссылке на Урале. Недавно в Сочи в архиве нам предоставили документы тех времён. У моего дедушки Вартака и бабушки Ашхен в хозяйстве были две коровы и две лошади.

Оба моих деда - активные участники Великой Отечественной войны, получили очень серьезные ранения, но, слава Богу, живыми вернулись домой. Дедушка Артак сражался на Центральном фронте и был ранен 29 октября 1941 года в обе ноги, причём бедренная кость была поломана.

Оставленного на поле боя умирать дедушку спас молодой белокурый парень из близлежащей деревни. Дедушка до конца жизни благодарил этого смелого доброго русского юношу.

В 50-е годы папа и дядя Артак сумели успешно окончить институты. Отец мой стал известным математиком, Заслуженным учителем Абхазии, много лет работал инспектором Горно г. Гагра. Он курировал математику, физику и армянские школы. В то время в Гагре было очень много армянских школ. Я начал учиться в армянской школе, но она сгорела, и меня перевели в русскую школу, которую я и окончил. Позже, на месте сгоревшей школы построили новую Гагрскую среднюю школу номер 3 имени Хачатура Абовяна.

Мое кредо - в свободное от работы время осуществлять малые социальные проекты. Вот уже 10 лет, как наша семья оказывает посильную помощь этой школе. Материально-техническая база школы была на крайне низком уровне. В свое время моя мама дала мне наставление: если будет у меня такая возможность, начать оказывать помощь школе им. Абовяна. Мои родители в течение многих лет дружили с директором и преподавателями этой школы, папа уделял повышенное внимание качеству преподавания и оказывал методическую помощь. При активном участии моих друзей, которые живут в Гаграх, по благословению отца Тарона, который служил в местной армянской церкви, нам удалось за счет средств нашей семьи отремонтировать и создать современный кабинет математики, оснастить его новыми компьютерами. Дирекция школы назвала Кабинет именем моего отца Календжяна Огана Артаковича. Прошло более 8 лет, и недавно мы полностью заменили старые компьютеры на 10 новых, в этом помогли и мои друзья, и мои ученики. Параллельно этому семья Вилена Вартапетяна, моего аспиранта, осуществила ремонт кабинета физики и химии имени академика Н. С. Ениколопова, купили телескоп и оборудование, чтобы дети могли наблюдать за звёздами, делать опыты, видеть, как образуются гром и молния.

Когда мы реализовали эти проекты, то появились и другие люди, тоже стали помогать, спортзал отремонтировали и ряд кабинетов. Указанная работа была направлена на то, чтобы повысить качество и условия обучения, чтобы местные армяне отдавали своих детей в армянскую школу. К сожалению, сейчас в армянскую школу ходит в 10 раз меньше детей, чем ходило в 70-е годы прошлого века: было 1000 детей, сейчас около 100 человек. В школе не хватает квалифицированных молодых учителей и литературы на армянском языке.

Другой мини - проект в сфере образования - полная замена основной части мебели в Каваклугской школе, где учился мой папа. Когда в деревню приехала моя старшая сестра и привезла мебель, то директор буквально со слезами радости на глазах

встречала ее со словами «Вы помните о нас! Спасибо!».

Более крупный проект-это строительство церкви в г. Гагра. Очень много людей участвовало в этой работе. Но нашей семье повезло: мы первые передали определённую сумму средств на возведение стен церкви, а другие люди дали в разы больше финансовых и материальных ресурсов, но тогда, когда стены уже были возведены.

Или вот другой пример. Мы собрали группу молодых людей и создали молодежную ассоциацию «Амшен», и они уже сами наладили работу этой ассоциации. Очень успешно выпускали журнал «Амшен» об истории, культуре и достижениях черноморских армян. Среди лидеров этой организации были дети моих друзей детства, молодая семья моей племянницы и многие другие. Я уделял много личного времени на наставнические беседы и мягкие консультации. Сейчас они действуют самостоятельно. Из них человек тридцать создали семьи, почти у всех есть дети, некоторые имеют по 2-3 ребёнка.

Каждый год мы всей семьёй и родственниками посещаем Армению, несколько раз были в Карабахе. События апрельской войны с болью отразились в наших сердцах. С помощью наших друзей из Repart Armenia мы нашли две семьи в далеких сёлах в районе Вардениса, которые вырастили настоящих героев, которые героически погибли, защищая Родину. Летом мы всей семьёй посетили их дома, чтобы выразить любовь и глубочайшее уважение родителям, жёнам и детям этих героев, которые достойно стояли на смерти и не сдали свои рубежи обороны.

Мои дети родились в Москве, но они могут читать и писать по-армянски, правда, пока не очень бегло. Знают и поют десятки песен по-армянски, танцуют народные танцы. Они абсолютно комфортно чувствуют себя в многонациональной среде Московской школы. Мне нравится, что мои дети не комплексуют по поводу своих имен - Армине и Оган - и своей фамилии. У них чудесные друзья в школе. А победы в олимпиадах и, особенно по русскому языку, математике и экономике доставляют нам всем огромное удовольствие. Но то, что они знают язык предков и историю Армении (изучали в школе «Айб»), историю семьи, все это добавляет им достоинства в глазах одноклассников и друзей других национальностей.

Дружба, обмен духовными и культурными ценностями между школьниками, студентами и взрослыми людьми создают синергию, огромные преимущества российского общества и служат гарантом могущества России.

Я был крещен в детстве, мои дети крещены в Эчмиадзине. Для меня Церковь - это наша историческая память, национальная идентичность, связь с предками, справедливость, вечность. Я ее рассматриваю как неотъемлемую часть своей жизни. Церковь - это место, где я духовно встречаюсь с моими близкими и родными, которых нет сейчас с нами, думаю о прошлом, настоящем и будущем. Для меня история моей семьи, это героическое прошлое моих предков, сильных духом, очень талантливых и трудолюбивых людей, которые достигли выдающихся успехов, несмотря на все тяжелейшие вызовы судьбы. Мы должны быть достойны их светлой памяти.

Материал записала и подготовила к публикации НИНА ГАБРИЭЛЯН

«АРМЯНСКАЯ ЦЕРКОВЬ»,
ежемесячная газета, Москва
N 4, апрель, 2017

ДУША АМШЕНА



Элеонора Узунян и Ваган Варвашян

руководителем был Забунян Андраник. Ансамбль впоследствии исполнял около двадцати народных танцев и участвовал в различных фестивалях и конкурсах, выступали в Грузии и Армении. Из

риалов, Ваган издал несколько книг, одна из них «Душа Амшена», впервые изданная в 2013 году в Туапсе, особо дорога автору - это многолетний труд, где собраны традиции, обряды, песни и

тельно угостят туршой», - рассказывает Ваган.


В сборнике много информации о домашней и полевой утвари таких как «Арор», «Кумши араба», «Хноци», «Шадиак», «Ширахона», «Мадмон», «Кармон», «Сондерк» и другие уже давно не использующиеся в быту. Подробно описаны ритуалы проведения традиционной свадьбы амшенских армян, похоронные обряды. Также описаны народные игры, давно позабытые такие как «Кушкурак», «Чавра», «Трошак», «Артурма», «Чалик», «Чет» и другие. На амшенском диалекте есть частушки «Мни», стихи, песни. В сборник также вошли описания музыкальных инструментов «Каманча», «Кемани», «Давул», «Зурна», «Диг» и другие. Сборник знакомит нас с творчеством поэтов, художников и других творческих людей, вышедших из среды амшенских армян.

В 2017 году сборник «Душа Амшена» был опубликован и переиздан уже дополненный новыми материалами.

«Сейчас я работаю над книгой об армянских фидаинах-амшенцах. Многого надо успеть сделать», - делится своими планами Ваган. «Важно сохранить преемственность поколений, на каких бы диалектах мы не говорили - мы все армяне. Мы должны быть едины, тогда мы будем сильны! Важно сохранить свой язык, с детства приучать ребенка к нашему языку. Мы древний и самобытный народ с богатой многовековой культурой, язык должен быть в центре всего, именно он хранит нашу культуру», - говорит Ваган. Во дворе нашего гостеприимного собеседника были слышны многие детские голоса, звучал наш родной амшенский диалект армянского языка. «Это мои внуки», - сказал Ваган, - у меня их двенадцать и все они носят армянские имена, говорят между собой на амшенском диалекте.

«Язык зеркало нашей культуры, язык наше духовное начало и продолжение - это Душа Амшена», - подытожил Ваган.

ЭЛЕОНОРА УЗУНЯН
Абхазия



рассказа Вагана мы узнали, что он много времени проводил в изучении культуры, фольклора, быта амшенских армян. После сбора значительного материала среди старшего поколения, Вагану удалось провести несколько этнографических фестивалей основанных на старых традициях, в частности реконструировали и провели амшенскую свадьбу и задокументировали на пленке. Ваганом была собрана также информация о народных играх амшенских армян и были проведены сами игры. Были собраны многие предметы быта и культуры, которых бы хватило на целый музей.

Ваган всю свою осознанную жизнь посвятил изучению амшенского субэтноса и сбора материалов для сохранения культуры. Он всегда в поисках, в работе никогда не расстается с видео камерой. В свое дело он вкладывает всю свою душу. Под псевдонимом Ваган Менакеци, из собранных мате-

риалов Ваган издал несколько книг, одна из них «Душа Амшена», впервые изданная в 2013 году в Туапсе, особо дорога автору - это многолетний труд, где собраны традиции, обряды, песни и фольклор амшенских армян. В книге подробно с иллюстрациями рассказывается о быте амшенских армян. Как в старину строили дома и подсобные помещения, такие как «Гороб», «Марак», «Махаза» и так далее, необходимые для ведения хозяйства. В разделе кухня амшенских армян подробно описаны множество блюд «Ека», «Бирех», «Татарлома», «Катлома», «Кашкаг», «Долма» с кукурузной мукой, «Армов абур» и другие, некоторые из них уже позабытые. Материалов по кухне амшенских армян собралось так много, что возникла необходимость издать еще отдельную книгу «Амшенская кухня» в которой собраны многие блюда амшенских армян. «Отличительной особенностью амшенских армян является безудержная любовь к турше, приготовление турши (маринованные стручки фасоли) это целый ритуал, даже в наше время, если зайти в гости домой к амшенскому армянину вас обяза-

ԲՈՆԻ ԻՍԼԱՄԱՑՎԱԾ ՆԱՅ ԿՆՈՋ ԿԵՐՊԱՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹՈՒՐԲ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

(Սկզբը՝ NN 7-8-ում)

«Մեծ մայրս» գիրքը մեծ աշխուժություն է մտցրել Թուրքիայում իսլամացված հայերի և ընդհանրապես Հայոց ցեղասպանության խնդրի քննարկման հարցում: Ինչպես փոխանցում է Չեթինը, գրքի հրատարակումից հետո շատերն են մոտեցել նրան և ներողություն խնդրել: Այս ամենը ի ցույց է հանում գրականության ազդեցիկ ուժը. «Շատ տեղեր, ուր գիտական կամ քաղաքական բանավեճերը չեն յաջողիր, պատվածքներն ու գրականութիւնը կը յաջողին: Օրինակի համար՝ Թուրքիոյ մէջ շատ վաճառուող թերթերէն մէկուն մէջ երիտասարդ գրող մը, «Մեծ մայրս»-ը եւ էլիֆ Շաֆաքի վէպը՝ ընկալել է ետք, այս մասին իր գրութիւնը կ'աւարտէ ըսելով. «Ես իմ կողմէս ներողութիւն կը խնդրեմ»:

Իսլամացված հայ կանանց թեմատիկայով գրված հաջորդ գիրքը, որը կցանկանայինք ներկայացնել, ազգությամբ քուրդ Յուսուֆ Բադիի (ծնվ. 1956 թ.) «Աղջիկ» հուշագրական վիպակն է, որը կրկին հենված է սկանալտես վերապրողի պատմած հուշերի վրա և գրքի հենց սկզբում հեղինակը նշում է, որ ամեն ինչ իրականություն է և ոչ թե երևակայություն կամ գեղարվեստական հնարանք: Ֆաթմա վերանվանված Մարիամը տասնամյակներով թաքցրել է ապրած վիշտը և միայն առաջացած տարիքում է գտել մի վստահելի գրուցակցի՝ ի դեմս իր թոռան՝ գրքի հեղինակ Յուսուֆ Բադիի, որին պատմել է իր հիշողությունները: Փոքր հասակում ցեղասպանության սարսափները ապրած Մարիամը բավական լավ հիշել է իր ծննդավայրը՝ Էրզրումի նահանգի Կարս-քափը գյուղը, իրենց բարեկեցիկ և երջանիկ ընտանիքը, հորը, մորը, երկու եղբայրներին, որոնց բոլորին կորցրել է: Ինչպես գրում է գրքի հեղինակ Յուսուֆ Բադին. «Ֆաթման իր ինքնության հետ կապված այս տեղեկությունները ոչ մեկի հետ չէր կարող կիսել, միայն ինձ էր վստահում, և երբ ես հարցեր էի տալիս, ինձ չէր կոտորում և որոշ բաներ պատմում էր»³: Սակայն, ըստ երևույթին, ապրած վախն է եղել պատճառը, որ նույնիսկ առաջացած տարիքում Մարիամը խնդրել է, որ պատմածը հրապարակվի միայն իր մահից հետո:

Նրա հիշողությունում վառ է մնացել իրենց ընտանիքի փախուստի նախապատրաստական փուլը: Ցեղասպանության ժամանակ արձանագրվել են դեպքեր, երբ զգալով մոտալուտ վտանգը՝ հայերը որոշել են փախչել կամ թաքնվել և, որպեսզի լրացուցիչ դժվարություններ չծագեն, երբեմն թողել են մանկահասակ երեխաներին՝ նաև նրանց անվտանգությունից

եղնելով: Մարիամը պատմում է, որ մի գիշեր հանկարծակի արթնանալով՝ տեսնում է տան անցուղարձը և փախուստի պատրաստվող իր ծնողներին: Տեղի տալով նրա արտասուքին՝ ծնողները որոշում են նրան նույնպես վերցնել իրենց հետ, սակայն թաքցնում են գյուղացիներից կազմված քարավանից,



քանի որ արդեն պայմանավորվել էին երեխաներին չվերցնել: Մարիամը պատմում է, որ փախուստական հայերի քարավանը ցերեկները թաքնվում էր, իսկ գիշերները քայլում: Ինչպես նշում է նա. «Մենք փախչում էինք և՛ կառավարությունից, և՛ հասարակ ժողովրդից»⁴: Տասնհինգ օր տևած փախուստից հետո վերջանում է սննդամթերքը, ջուրը և բացի այդ պետության համար աշխատող որոշ քրդեր իմանում են փախստական հայերի մասին ու սկսում հետապնդել նրանց: Քարավանի առաջնորդները, այդ թվում և Մարիամի հայրը, որոշում են հեռանալ, որպեսզի ուտելիք հայթայթեն և միգրացե կանխեն մոտալուտ վտանգը: Նրանց գնալուց հետո քարավանը շրջապատվում է ծիավոր զինվորների և քաղաքացիական հագուստով մարդկանց կողմից: Տղամարդկանց ձեռքերն անմիջապես կապում են և ամբողջ քարավանին չորսական հոգի շարքի ձևով դասավորելով՝ հրամայում քայլել: Այդպես մի քանի օր քայլելուց հետո հասնում են Մարդինում տեղակայված հավաքատեղի, ուր բերել էին տարբեր վայրերից աքսորյալ հայերի: Մի քանի օր այդ ճամբարում ահավոր պայմաններում մնալուց հետո մի առավոտ զինվորները սկսում են ճամբարից մոտ 60 մարդ առանձնացնել և կապկպելով տանել անհայտ ուղղությամբ: Քիչ հետո պարզվում է, որ այդ մարդկանց տանում էին սպանելու: Փոքրիկ Մարիամի մոտ վառ է մնացել իր ընտանիքի սպանդի տեսարանը. «Երեկոյան կողմ փոքր մի խումբ էինք մնացել, սպասում էինք, թե երբ են գալու մեզ վերցնելու: Գիտակցելով մահվան էինք գնում: Ես փոքր էի, չէի գիտակցում, սակայն քարավանի մյուս


մարդիկ շատ լավ գիտեին, թե վերջը ինչ է լինելու: Հավաքատեղիից 500 մետրի չափ հեռացանք: Հավաքատեղին իսկող զինվորները մեզ հանձնեցին դահիճներին: Դահիճները ձեռքներին ունեին թերե, իսկ գոտկատեղին՝ դաշույններ: Գոտիների տակի դաշույնների և թերի վրայի արյունը աչքերիս դիպավ: Մեր խումբը վերցրած դահիճը քառասուն տարեկան, կարճահասակ, շալվար և ժիլետ հագած, հաստ և սև ունքերով, մուգ մաշկով, սև բեղերով, գլխին համալիով մի մարդ էր: Այդ մարդը իմ մորը և երկու եղբայրներիս սպանեց»⁵: Դահիճի կերպարը ամենայն մանրամասնությամբ տպավորվել է Մարիամի հիշողությունում և ամբողջ կյանքում ուղեկցել նրան: Այդ ամենի պատճառով նա կյանքի տարբեր տարիներին խոր հոգեկան ապրումներ է ունեցել, սակայն դրանք թաքցրել է անգամ իր երեխաներից: «Եղբայրներիս աչքերիս առաջ թորվ հարվածելով գլխերին՝ սպանեցին և մարմինն ու գլուխը իրարից բաժանելով նետեցին հորը: Մինչև սպանելը նրանց միայն մի հարց էին տալիս. «Իսլամ ընդունո՞ւմ եք»: Նրանց բացասական պատասխանից հետո դահիճը իջեցնում էր սուրը: Գլուխը մի կողմ, մարմին մեկ այլ կողմ էին նետում: Այդ ընթացքում ես շարունակ լալիս էի, ինձ մորս գրկից վերցրին: Մորս և եղբայրներիս աչքիս առաջ սպանեցին: Ես շուրջ եմբարկվեցի: Շարունակ լալիս էի, սակայն միայն ես չէի, որ լալիս էի: Հարյուրավոր հայեր իրենց մահվան հերթին սպասելիս մեկը պապանձվել էր, մեկը լացում էր: Մեկի եղբորը, մեկի հորը, մեկի սիրելիին նրանց աչքի առաջ գլխատում էին: Մարդ ինչպես կարող է չլացել, որդիս»⁶: Նկատելի է, որ սպանության տեսարանը խոր հետք է թողել Մարիամի վրա, և նա բազմիցս դա կրկնում է: Փոքրահասակ աղջկա հիշողության մեջ տպավորվել է նաև այն հանգստությունը, որով դահիճները կատարում էին իրենց գործը: Հետևյալ տողերը լավագույնս ներկայացնում են ամբողջ տեսարանը. «Ես իմ այս ապրածների շուրջ մեջ էի, երբ մի ծիավոր մեզ մոտ եկավ: Հորի մոտ գտնվող դահիճներին ասաց՝ «գործերին հաջողություն», և դահիճապետ Իբրահիմը ընդհատեց գործը, գնաց ծիավորի մոտ: Նստեցին, խոսեցին, հեռում էին, կարծես սպանդանոցում անասուն էին մորթում: Առանց վախենալու, ամաչելու պատմում էին իրենց արածները, ծիծաղում: Պարզվեց՝ այդ ծիավորն էլ էր դահիճ և մի այլ հորի մոտ է աշխատում»⁷: Այս ամենը տեղի է ունենում փոքրահասակ երեխաների աչքի առաջ, որոնք լալիս են և սպասում իրենց ձակատագրին: Մինչև դահիճները գրուցել են

իրար հետ, նրանցից մեկը նկատել է փոքրիկ Մարիամին և հարցրել մյուսին. «Այս փոքրիկ աղջիկը ի՞նչ գործ ունի այստեղ»: Դահիճ Իբրահիմն էլ պատասխանել է. «Սալիհ, եթե ուզում ես, դու նրան քեզ վերցրու, իմ տանը լիքը կան սրանցից: Թե չես ուզում, ես կվերցնեմ»: «Լավ, շատ սիրուն աղջիկ է, ես ինձ կվերցնեմ»⁸: Ահա այսպես 7 տարեկան Մարիամը բաժին է հասնում դահիճ Սալիհին, որը նրան տանում է իր տուն, այնուհետև իսլամացնում և տալիս Ֆաթմա անունը: Սակայն երեսնամյա երկար ժամանակ մղձավանջի մեջ է եղել իր տեսածների ազդեցությունից, գիշերները սարսափներ տեսել, չի կարողացել քնել, ինչպես ինքն է ասում՝ իր ընտանիքի դահիճ Իբրահիմի պատկերը չի հեռացել հիշողությունից: Հետագրքի է, որ դահիճն այն աստիճան է տպավորվել նրա մեջ, որ տարիներ անց էլ պատահաբար տեսնելով նրան՝ անմիջապես ճանաչել է և կրկին վերապրել այդ ամբողջ սարսափները: Սակայն կրկին իր մեջ է պահել ապրումները, այսինքն՝ ենթարկվել նոր տրավմաների և այդ մասին ոչ մեկին չի պատմել. «Իհարկե, ոչ մեկին չհասցի, իմ մեջ մնաց: Եվ ոչ մեկն էլ չունեի, որն ինձ գաղտնի պահեր կլինեք, ես ոչ մեկին չէի վստահում և գաղտնիքներս չէի ասում»⁹: Դահիճի հետ հանդիպման մեկ այլ դրվագ էլ է ներկայացված գրքում, որտեղ միևնույն ժամանակ ի ցույց են հանվում Մարիամի հոգեկան տանջանքները: Մի օր Մարիամի հարևանի տանը հյուրեր են գալիս և նրանից խնդրում են օգնել սեղան պատրաստելու հարցում: Գնալով հարևանի տուն՝ Մարիամը տեսնում է, որ հյուրը իր ընտանիքի դահիճն է՝ Իբրահիմը Հոփանը և Մարիամը կրկին վերապրում է մանկության սարսափները. «Երբ նայում էի հյուրի դեմքին վերհիշում էի այն պահը երբ կանգնել էր հորի գլխին: Երբ նա խոսում էր աչքիս առաջ էր գալիս այն պահը, թե ինչպես բարձր ծայրով թռվում էր մորս վրա: Երբ ժպտում էր հիշում էի այն պահը, երբ մյուս դահիճ՝ Սալիհի հետ նստած գրուցում էր: Երբ ծխախոտը բերանն էր դնում միտքս էր գալիս այն պահը, երբ հորի մոտ գլխատեց իմ եղբայր Մելքին: Դե հիմա արի ու ճաշ պատրաստիր ու կերակրիր այս մսագործին»¹⁰:

Մարիամի գաղտնապահության մեջ կարևոր դեր է խաղում նաև միջավայրը, որտեղ հայ լիներ, մեղմ ասած, հարգի չէր, և ինչպես ասում է ինքը՝ Մարիամը. «Որևէ մեկին իմ վիշտը չէի կարող ասել, որովհետև եթե ասեի, ինձ կոչնչացնեին, կասեին՝ Ֆաթմա դեռ հայ է»¹¹: Կյանքի վերջում թռանդ՝ Յուսուֆին պատմելով իր կրած տառապանքները՝ նա ասում է բնու-

թագրական մտքեր, որոնք ցույց են տալիս թե՛ տրավմատիկ հիշողությունների առկայությունը, և թե՛ այն միջավայրի բացակայությունը, որը կօգներ ազատվել դրանցից. «Իմ ամենամեծ ցավը գիտե՞ս որն է, Յուսուֆ, տղաս: Ես այս գաղտնիքներն այսքան տարի թաքցրել եմ, քանի որ ոչ մի գաղտնիքներ չեմ կարողացել գտնել, ոչ մեկը չկար, որին վստահեի: Ես էլ ձգտեցի մոռանալ, սակայն սրանք մոռացվող դեպքեր չէին»¹²:

Իսլամացված հայ կանանց թեմայով գրված ստեղծագործությունների շարքին է դասվում Գյուլչիչեք Գյունել Թեքինի «Սև պատանք» փաստագրական գիրքը, որտեղ հեղինակը հավաքել է իսլամացված մի քանի հայ կանանց պատմություններ: Գրքի ենթավերնագիրն արդեն խոսում է. «Իսլամացված հայ կանանց դրաման»: Գրքում առկա մի քանի պատմությունները ունեն որոշակի ընդհանրություններ, որոնք բնորոշ են թեմատիկային, ուստի կցանկանայինք անդրադառնալ այդ



պատմություններից մի քանիսին: Հատկապես ուշագրավ է Խարբերդի Քուլվենը գյուղից Վարթեր Թումաջանյանի պատմությունը. ցեղասպանությունից կարճ ժամանակ առաջ Վարթերի ավագ եղբայրը փախչում է Ռուսաստան, այնտեղից էլ Ամերիկա, իսկ Վարթերի ամբողջ ընտանիքը, ինչպես նաև նրանց քարավանը կոտորվում է Հիզոլ կոչված գետի մոտ: Աքսորի ժամանակ Վարթերին փախցնում և մահից փրկում է դերսիմցի Ջաֆեր Թան անունով քուրդ զինվորը, որը լինում է հայերի քարավանները ուղեկցողների շարքում: Ջաֆեր Թանը ամուսնանում է Վարթերի հետ, փոխում նրա կրոնը, անունն էլ դարձնում է Ջեյնեփ: Ուշագրավ է հատկապես այն, որ որոշ ժամանակ անց Վարթերը և նրա ամուսինը բնակություն են հաստատում ցեղասպանությունից առաջ բավական բարեկեցիկ կենցաղ ունեցող Վարթերի հայրական տանը, տեղ կանգնում այգում, դաշտին, քանի որ Վարթերը մնացել էր Թումաջանյանների ընտանիքի միակ օրինական ժառանգը: Սակայն իսլամացված Վարթերի համար հարազատ գյուղ և տուն վերադառ-

(Սկիզբը՝ 6-րդ էջում)

նալն ու ապրելը եղել է փոքրիկ սփոփանք և, միևնույն ժամանակ, տանջանք, ինչը ստեղծված պայմաններում ավելի նախընտրելի է եղել: Մի կողմից՝ այդ ամենը նրան շարունակ հիշեցրել է կորցրած ընտանիքի մասին, սակայն, մյուս կողմից, նրան կարոտն առնելու հնարավորություն տվել: Այս մասին հետագայում նա ասել է աղջկան՝ Շիրին Թանին. «Ամեն դաշտում, ամեն ծառի տակ, ամեն աղբյուրում, ամեն առվակում մորս, հորս, եղբայրներիս հետը կար: Ամեն անգամ տուն մտնելիս պատկերացնում էի մորս, հորս, եղբայրներիս: Կարծես նրանց տեսնում էի, կարծես ծայրերն ականջներիս ծայր էին տալիս»¹³: Սակայն որոշ ժամանակ անց, երբ ստիպված են լինում լքել Վարթերի հայրական գյուղը և տունը, նա ապրում է երկրորդ տրավման: Ինչպես այլ հերոսներ, Վարթերը նույնպես կապ է պահպանել ճակատագրակից հայուհիների հետ, և անշուշտ, նրանց միավորողը իրենց անցյալի և ապրած սարսափների հետ կապված հիշողություններն էին: Ինչպես նշում է Շիրին Թանը, մայրը մտերիմ է եղել կրկին իսլամացված հայուհի Մելեքի հետ. «Երբեմն-երբեմն գրուցելիս նրանք լալիս էին: Մեկ օր անգամ մտքներովս չանցավ հարցնել, թե ինչո՞ւ էին լալիս»¹⁴: Վարթեր Թանը, թեկուզ գաղտնի, ձգտել է պահպանել հայկական քրիստոնեական որոշ սովորույթների տարրեր՝ դրանք թաքցնելով անգամ երեխաներից և ամուսնուց: Այդպիսի մի սովորույթի տարրերից է եղել հաց թխելիս խմորի վրա խաչի գաղտնի նշան անելը: Սակայն մի օր ամուսինը, պատահաբար տեսնելով դա, բարկացել է և ծեծել նրան՝ ասելով. «Հայի աղջիկ, տարիներ անցան, սակայն դու դեռ քո հայությունից չես հրաժարվել»¹⁵:

Տարիներ անց՝ 1955 թ. ԱՄՆ-ի Չիկագո քաղաքում հաստատված Վարթերի եղբայրը գտնում է քրոջ հետը և նրան նամակ ուղարկում: Այդ նամակները և Վարթերի համար դառնում են թանկարժեք իրեր, «անասելի երջանկության աղբյուր»¹⁶ և իր նախկին ընտանիքի հետ կապող բարակ կամուրջ: Նրանց մեջ սկսվում է նամակագրություն և Վարթերի եղբայրը նրան հրավիրում է ԱՄՆ՝ հույս հայտնելով մինչև մահը հանդիպել. «Քո բոլոր ծախսերը ես կհոգամ, միայն թե դու արի, մինչև մահանալս թեկուզ մեկ անգամ քեզ տեսնեմ»¹⁷, - գրում է եղբայրը: Սակայն Վարթերի ամուսինը կտրուկ դեմ է լինում ԱՄՆ այցելելու խնդրին և արգելում նրան: Սա Վարթերի համար լինում է ևս մեկ լուրջ տրավմա, որը կրկին թարմացնում է նրա նախկին տրավմաները: Ամուսինը, ըստ երևույթին, վախենում էր, որ այցելելով ԱՄՆ և վերագտնելով իր հարազատներին՝ Վարթերը այլևս չէր վերադառնա Թուրքիա: Ինչևէ,

որոշ ժամանակ անց Վարթերի եղբայրը մահանում է, իսկ նրա ընտանիքի հետ կապը ընդհատվում:


Վարթերի այս միայնակ, չհասկացված և իր ստեղծած ներքին աշխարհում փակված մնալը տարիներ հետո պետք է ցավ պատճառեին նրա գավակներին, որոնք խղճի խայթ են զգում նրան չհասկանալու, հոգսակից չլինելու, ցավերը չկիսելու համար: Ինչպես ասում է նրա դուստր Շիրինը. «Մենք նրան երբեք չկարողացանք հասկանալ, երբեք չկարողացանք ցավերը կիսել: Մայրս միշտ միայնակ էր և տառապում էր, և ոչ մեկն էլ նրա ցավով չէր հետաքրքրվում»¹⁸: Ինքը՝ Վարթերը, կյանքի վերջում, որպես իր տառապանքների վկայություն, ասել և մահից առաջ իր երեխաներից խստորեն պահանջել է հետևյալը. «Ես օր ու արև չեմ ունեցել, իմ օրերը սև էին: Անընդհատ ցավեր են ապրել, կյանքս սև է եղել: Երբ մեռնեմ, իմ պատանքն էլ թող սև լինի: Գերեզմանս էլ չսարքեք, թող հարթ հող լինի»¹⁹: Սև պատանքը, որը դարձել է նաև գրքի վերնագիր, խորհրդանշում է ոչ միայն Վարթերի, այլև նման ճակատագիր ունեցող իսլամացված շատ հայուհիների կյանքը:

Նույն գրքի մեկ այլ հերոսուհի՝ Հաճընից Ջարուրեն, որը հետագայում անվանափոխվում է դառնում է Մելեք, ցեղասպանության ժամանակ եղել է 7-8 տարեկան: Կոտորածի մասին լուրը առնելուց հետո գյուղացիները սկսում են անկանոն փախչել, նրանց մեջ է լինում նաև Մելեքի ընտանիքը՝ հայրը, մայրը և եղբայրները: Փախուստի ժամանակ փոքրիկ Ջարուրեն կորցնում է ընտանիքին և իր նման բախտակից երեք երեխաների հետ մի քանի օր փախչելուց հետո պատսպարվում են մի քարանձավում: Նրանց է միանում նաև բարուրի երեխայով մի փախստական հայուհի: Որոշ ժամանակ անց շրջակա գյուղերից քրդերը խմանում են նրանց թաքստոցի տեղը և գալիս վերցնում են նրանց: Այդ ընթացքում մահանում է հայ կնոջ մանկահասակ երեխան: Այդ կնոջը, ինչպես և փոքրիկ Ջարուրեին իր տանը ապաստան է տալիս Գեզբել գյուղի գյուղապետ Էթեն Օզքանը²⁰: Որոշ ժամանակ անց զինվորականներին մատնում են, որ գյուղապետի տանը կան թաքնված հայեր և նրանք գալով գյուղ պահանջում են փախստականներին: Ի վերջո գյուղապետը ստիպված հանձնում է հայ կնոջը՝ նշելով, թե մյուսները իր հարազատ երեխաներն են: Զինվորականները վերցնում են հայուհուն և հենց գյուղի մոտակայքում սպանում նրան: Ջարուրեին փրկած գյուղապետը լինում է քուրդ ալկի, նրան բավական լավ է վերաբերվում, մի քանի տարի անց էլ Ջարուրեին ամուսնացնում են Կեսարիայի Օրդեքի գյուղից մի մուսուլմանի հետ, ումից նա ունենում է ինը երեխա: 1940-ականների կեսերին պարզվում է,

որ Ջարուրեի հայրը ողջ է, բնակվում է Բեյրութում և շուրջ երեք տասնամյակ փնտրել է իր կորած աղջկան: Սահմանին մաքսանենգ ապրանքների ներմուծմամբ զբաղվողներին հարցուփորձ անելու ժամանակ պատահաբար հանդիպում է Ջարուրեի գյուղից մի մաքսանենգի և նրա միջոցով էլ իմանում աղջկա մասին: Նրանց մեջ սկսվում է նամակագրություն և հայրը Ջարուրեին հրավիրում է Բեյրութ: Այդ ժամանակ Ջարուրեի ամուսինը մահացած է լինում, և նա իր երեխաներից մեկի հետ այցելում է հորը՝ Բեյրութ: Այնտեղ նա իմանում է, որ իրենց ամբողջ ընտանիքին փախուստի ժամանակ սպանել են և միայն հայրն է կարողացել հրաշքով փրկվել: Սկզբում նա փախել է Սիրիա, իսկ այնտեղից Բեյրութ, որտեղ նոր ընտանիք է կազմել և ունեցել երեխաներ: Հոր հետ հանդիպումը մեծ լիցք է տալիս Ջարուրեին և իր բախտակից կանանց մեջ առ համարվում է երջանիկ, քանի որ տարիներ անց, ի վերջո, կարողանում է գտնել իր ընտանիքին և անգամ հանդիպել նրանց, մի բան, որը չի վիճակվել հազարավոր իսլամացված հայուհիների:

Ցեղասպանությունից փրկված մեկ այլ հայուհու ճակատագիրը նման է իր բախտակից շատերին. Քոզլուք գավառից Փիրե Հաթունի մասին նշվում է, որ չնայած բարեկեցիկ կենցաղին՝ նա ընդհանրապես երջանիկ չի եղել. «Կարծես սրտի ամբողջ ցավը, ամբողջ հոգսերը դեմքին էին արտահայտված: Ասես բոլոր դիմագծերը լի էին իր կրած տառապանքով»²¹: Փիրե Հաթունը՝ ինչպես շատ ուրիշներ, իր անցյալի ցավերի մասին շատ չի խոսել և միայն կյանքի մայրամուտին է համարձակվել վիշտը կիսել հարազատների հետ: Այս դեպքում ևս հարմար գաղտնիկներ է դարձել նրա թոռը՝ Սեբահաթը. «Իմ հորական տատս՝ Փիրե Հաթունը, ինձ հետ շատ էր կապված, ինձ շատ էր սիրում: Փոքր հասակում մայրս մահացել էր, ես որք էլ մնացել երկի նաև դրա համար իմ հանդեպ վերաբերմունքը առանձնահատուկ էր: Երբ ես մի քիչ մեծացա նա արդեն վատառողջ էր: Արդեն չէր կարողանում մանկաբարձություն անել: Հետո տատիս աչքերը կուրացան, ձեռքից-ուտքից ընկավ: Ես աշխատում էի նրան օգնել: Երբեք չեմ մոռանա՝ նստում էր մի անկյունում և ինձ իր մոտ էր կանչում: Ես գնում նստում էի մոտը և նա ինձ պատմում էր իր հետ պատահած ամեն ինչ: Իր ապրած բոլոր ցավեր, վշտերը»²²: Ըստ Փիրե Հաթունի պատմածների, իր ամուսնությունից մեկ ամիս անց սկսվել է ցեղասպանությունը, որին զոհ են գնացել իր ամուսինը, հայրը, եղբայրները և գրեթե բոլոր ազգականները, իսկ իրեն փախցրել է Շաթ գյուղից Խալիլե-Դերվիշ անունով մի քուրդ և ամուսնացել հետը: Ինչպես շատ այլ հայուհիներ Փիրե Հա-

թունը ևս մարդկանց հուշերում մնացել է իր մաքուր կենցաղով, իր եփած ճաշերով, հարեհասությամբ և բացի այդ, նրա կարևոր առանձնահատկությունն է այն, որ նա եղել է Քոզլուք գավառի մանկաբարձուհին և բազմաթիվ երեխաների օգնել լույս աշխարհ գալու:



«Սև պատանք» գրքում հավաքված պատմությունները ևս մեկ անգամ փաստում են, որ ցեղասպանության իրագործման մեջ մեծ դեր են ունեցել քրդերը և գրքի հերոսուհի առևանգված բոլոր հայուհիները բռնի իսլամացվել են հենց քրդերի կողմից: Նկատելի է նաև, որ բոլոր հայուհիները ունեցել են ձգտում գտնել իրենց ազգականներին կյանքի տարբեր տարիներին, անգամ խոր ծերության ժամանակ և նրանց շրջանում իրենց ազգականներին գտածները համարվել են «երջանիկներ»: Այս երևույթը ևս նրանց հոգեկան աշխարհի կարևոր բաղկացուցիչ մասերից է:

Բռնի իսլամացված հայուհու և նրա որդու բարդ հոգեբանական խնդիրներն է վեր հանում 2007 թվականին հրատարակված Ֆիլիզ Օզդեմի (ծնվ. 1965 թ.) «Կախն է իմ տերը» վեպը: Կարելի է ասել, որ վեպի հիմքը կրկին փաստագրական է, սակայն ի տարբերություն մյուս նմանատիպ ստեղծագործությունների՝ ավելի մեծ տեղ է տրված հերոսների հոգեբանական աշխարհի պատկերմանը: Բարդ պլոտային միահյուսումներով, մանվածապատ պատմումներով հագեցած գիրքը դժվար է բնութագրել որպես զուտ փաստագրական վեպ, այն ավելի շատ հոգեբանական ստեղծագործություն է՝ փաստական հիմքով: Գրքի գլխավոր հերոսներից է Սուդեն, ով պատահաբար իմանալով իրենց ծագման մեջ հայկականության առկայության մասին՝ սկսում է թնիկ ինքնության փնտրտուքները, որի ընթացքում ի հայտ են գալիս բազմաթիվ փաստեր: Մայրական պապի մահից հետո Սուդենի մայրը ինքն էլ իր համար պատահաբար պարզում է, որ հայրը իրականում հայ է եղել ու դա նրա համար բացասական ազդեցություն է ունենում, որը գրքի հեղինակը բավական վարպետորեն ներկայացնում է. «Մայրս լացելով սենյակս մտավ: Աչքերի կանաչ բիբերը էլ ավելի ցայտուն էին դարձել ընդհանուր կարմրածության ֆո-

նին: Ակնախոռոչները ասես դուրս թռած լինեին. «Պարզվում է մենք հայ ենք եղել» ասաց: Ես տասնութ տարեկան եմ: Պապս նոր էր մահացել: Եթե հայ էինք, ապա ինչո՞ւ այդ մասին չգիտեինք, կամ էլ եթե հայ ենք դրա մեջ ի՞նչ կա լացելու»²³:

Դրանից հետո տասնութամյա Սուդենի մոտ տարատեսակ հարցեր են ի հայտ գալիս, որոնց պատասխանը մայրը չի կարողանում տալ, սակայն հերոսուհու համար մի բան ակնհայտ է դառնում, դա այն է, որ իր պապը ապրել է ինքնության երկվորյուն՝ ունեցել է իր արտաքին և ներքին աշխարհները, որոնցից յուրաքանչյուրում ինքը լիովին տարբեր մարդ է եղել: Թուան համար առաջնային խնդիր է դառնում պապի երկրորդ՝ թաքնված ինքնության գտնելը: Դրանից հետո է, որ Սուդեն սկսում է ինքնության, արմատների փնտրտուքները, որն այդքան էլ չի խրախուսվում իր ազգականների, ընտանիքի կողմից և դրանով էլ ավելի բարդացնում աշխատանքները: Տասնութամյա աղջկա հետաքրքրությունն իր արմատներով հատկապես բարկացնում է մորական տատին, որը նրան խստորեն քննադատում է միաժամանակ նշելով, որ իրենք թուրք են և մուսուլման: Սակայն Սուդեն ավելի տրամաբանված բացատրություն է տալիս իր ցանկությանը. «Իմ մայրական կողմի ցեղի մի ճյուղը կոտորված է, ես ուզում եմ այդ ճյուղի մասին իմանալ: Կարելի է իհարկե մտածել, թե մահացած մի շարք մարդկանց ամուսնները իմանալով ի՞նչ են անելու: Սակայն նրանք լոկ մահացած մարդիկ չեն. նրանք իմ պապերն են, ապուպապերը, տատերս են, մեծ տատերս»²⁴:

(Շարունակելի)

ՌՈՒԲԵՆ ՄԵԼՔՆՅԱՆ
ՆԱԻՐԱ ՊՈՂՈՍՅԱՆ
Բանասիրական գիտ.
թեկնածուներ

- 1 Այստեղ խոսքը վերաբերում է թուրք հայտնի կին գրող Էլիֆ Շաֆաքի «Հայրը և ապօրինի զավակը» վեպին:
- 2 Հարցազրույց «Մեծ մայրիկս» գիրքի հեղինակ Ֆեթիյե Զեթինի հետ, Ազդակ, 27.11.2006:
- 3 Bagi Y., Ermeni kizi. Agcik, Istanbul, 2007, s. 7.
- 4 Նույն տեղում, էջ 9:
- 5 Նույն տեղում, էջ 11:
- 6 Նույն տեղում, էջ 13:
- 7 Նույն տեղում, էջ 14:
- 8 Նույն տեղում:
- 9 Նույն տեղում, էջ 36:
- 10 Նույն տեղում:
- 11 Նույն տեղում:
- 12 Նույն տեղում, էջ 37:
- 13 Tekin G., Kara kafen, Istanbul, 2008, s. 12.
- 14 Նույն տեղում, էջ 17:
- 15 Նույն տեղում, էջ 19:
- 16 Նույն տեղում, էջ 13:
- 17 Նույն տեղում, էջ 14:
- 18 Նույն տեղում, էջ 5:
- 19 Նույն տեղում, էջ 21:
- 20 Նույն տեղում, էջ 27:
- 21 Նույն տեղում, էջ 76:
- 22 Նույն տեղում, էջ 89-90:
- 23 Özdem F., Korku Benim Sahibim, Istanbul, 2007, s. 53.
- 24 Նույն տեղում, էջ 54:

«ԻՆՉԻՐ ՀԱՄՇԵՆԱԿԻ ԽԱՔՐԵ ԶԵՍ»

«Մեդիալարի» գրուցակիցն է ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտաշխատող, ազգագրագետ, բանահավաք, «Համշեն» հայրենակցական-բարեգործական ՀԿ փոխնախագահ, «Ձայն համշենական» ամսաթերթի գլխավոր խմբագիր ՍԵՐԳԵՅ ՎԱՐԴԱՆՅԱՆԸ:



- Պարոն Վարդանյան, համշենցիների մասին կարդացիլսեցի ու եկա այն եզրակացության, որ նրանք ինքնության հյուծվող թելից կախված մարդիկ են՝ մի մասը մուսուլման է դարձել, իսկ քրիստոնյա համշենցիները խոսում են անծանոթ ու մեռնող բարբառով:

- Քրիստոնյա համշենցիները, բնականաբար, իրենց հայ են համարում: Եթե նրանց հարցնես՝ որտեղացի՞ ես, կասեն՝ ջնիկցի եմ, օրդեցի եմ, տրապիզոնցի եմ: Կրասնոդարի երկրամասում, Աբխազիայում ինձ երբեմն հարցնում էին, թե ինչո՞ւ են իրենց համշենցի ասում: Վերջին տասնամյակներում այդ մասին շատ զրվեց, հիմա բոլորը գիտեն, որ իրենց պապերը Ջնիկ, Օրդու, Տրապիզոն են եկել Համշենից: Օրինակ՝ սասունցիները Սասունից են եկել Թալին, եթե Թալինից էլ մի ուրիշ տեղ են գնում, հարցնում են՝ որտեղացի՞ եք, ասում են՝ Թալինից ենք: Իմացողը հասկանում է, որ նրանք նաև սասունցի են: Զիմացողն էլ երկի կմտածի, որ էստոնիայի մայրաքաղաք Տալլինից են: Իսկ իսլամ համշենահայերը, որ ապրում են Ստամբուլում կամ Արդվինի նահանգում, որպեսզի չասեն՝ թուրք ենք, ասում են՝ համշենցի ենք, քանի որ չեն կարող ասել՝ հայ ենք, որովհետև քրիստոնյա չեն: Սա ինքնությունը և՛ պահելու, և՛ թաքցնելու միջոց է:

- Մուսուլման դարձած համշենցիներն ինչպե՞ս են կարողանում պահել իրենց մշակույթը, ավանդույթները:

- Շատ կարևոր է իմանալ, թե որքան ժամանակ է անցել նրանց իսլամ ընդունելուց: Համշենցիները մասսայաբար իսլամ են ընդունել 1720-ական թվականներին: Պատկերացրե՛ք՝ 300 տարի առաջ իսլամ ընդունած հայեր են, և որքան մեծ փոփոխություններ են եղել նրանց մշակույթում: Բայց երբ նրանց հարցնում են՝ որտեղացի՞ ես, ասում են՝ համշենցի եմ: Ինչպես ես Ձեր հարցին՝ որտեղացի եմ, պատասխանեցի՝ վանեցի եմ, թեպետ պապս ու տատս 1915-ին են այնտեղից գաղթել: Համշենում գյուղերը սարերում

ու անտառներում ցրված են: Մինչև 1950-60-ական թվականները Ռիզեի նահանգի համշենցիները հայերեն էին խոսում: Երբ էլեկտրականությունը քաշեցին, հեռուստացույց բերեցին, այդ ժամանակ թիզեցիները թրքախոս դարձան: Նրանք պահպանել են բազմաթիվ հայերեն բառեր, որոնց մի մասը գրի են առել իրենց գյուղերում: Մինչև այդ մարդիկ, մանավանդ կանայք, թուրքերեն չէին խոսում: Սարի ծայրին էին ապրում, որտե՞ղ պիտի սովորեին: Նույն վիճակն էր նաև Արդվինի նահանգում, որտեղ մինչև 1970-80-ական թվականներին էլեկտրականություն անցկացնելը շատերը թուրքերեն չգիտեին: Հիմա երեխաները թուրքերեն մուլտ են նայում ու մանկուց թուրքերեն գիտեն: Հաճախ, երբ համշենցիների հետ նստած գրուցում ենք, նրանք թուրքերենի են անցնում: Ասում են՝ «Ինչի՞ համշենցիս խաբրե չես» (ինչո՞ւ Համշենի բարբառով չես խոսում): Պատասխանը հայտնի է, մերօրյա շատ երևույթների մասին իրենց խոսվածքում համապատասխան բառեր չկան: ՅՈՒՆԵՍԿՕ-ի տվյալներով՝ Համշենի բարբառը Թուրքիայի 18 վտանգված լեզուներից է:

- Համշենցիները հյուրասե՞ր մարդիկ են: Երբ համշենցիների մասին նյութեր էի ուսումնասիրում, հողվածներից մեկում հեղինակը պատմում էր, թե ինչպես մի գյուղում համշենցիների գտավ, կինն ու աղջիկը սիրով գրուցում էին, բայց երբ եկավ ընտանիքի հայրը, խիստ տոնով վերջ տվեց գրույցին և տան դռնից ներս էլ չթողեց:

- Համշենցիներն ավելի ներամիտ մարդիկ են: Համշենցիների մոտ անծանոթ մեկը գնա, կխոսափեն շատ թեմաներով խոսել, բախում թեյ կհյուրասիրեն, կձանապարհեն, ներս չեն հրավիրի: Այնտեղ ընդունված չէ անծանոթ մեկին, մասնավորապես, օտարերկրացուն տուն տանել: Նրանք, այդ, զգուշավոր են, զուգե հանգա-

մներ կանչ» թերթում ու սկսեցի Աբխազիայի, Կրասնոդարի երկրամասի հայ երեխաների բանաստեղծությունները տպել: Այդպես կապ ստեղծվեց համշենցիների հետ: Մի օր էլ Ադլերից եկավ Անդրանիկ Ջեյթունյան անունով մի համշենցի մանկավարժ, որը Հայաստանից գրքեր էր տանում, դպրոցներում բաժանում, ազգային ինքնապահպանման հարցերով էր զբաղվում: Նրա միջոցով գտա ինձ հուզող շատ հարցերի պատասխանները և ամրապնդեցի կապերս համշենցիների հետ:

- Որքանո՞վ են ամուր այդ կապերը: Որքան գիտեմ՝ Հայաստանում կա մեկ «Համշեն» հայրենակցական-բարեգործական հասարակական կազմակերպություն, որի փոխնախագահն եք, մեկ ռադիոհաղորդում՝ «Համշենական գրուցարան», որի հեղինակն եք, և մեկ ամսաթերթ՝ «Ձայն համշենական», որի խմբագիրն եք, Ձեր տանն եք այն պատրաստում:

- Դե, եթե այդքանը գիտեք, ուրեմն այդքանն է: Տարիներ շարունակ նյութեր էի հավաքում, որ Երևանում Համշենին ու համշենահայությանը նվիրված թանգարան հիմնեմ, բայց հիմա հասկացել եմ, որ այդ երազանքն չի իրականանա: Մենք փոխվել ենք, ազգային գիտակցության սրընթաց անկում ենք ապրում: Կրասնոդարի երկրամասի ու Աբխազիայի համշենցիներին էլ նախկինի պես հետաքրքիր չէ Հայաստանի հետ կապերի պահպանումը: Երևան եկած համշենցուն խնդրում եմ թերթ, գիրք տանել իր հետ, անվճար բաժանել, չի տանում: Համշենցի ուսուցչին խնդրում եմ իր, դպրոցի աշակերտների նկարներն ուղարկի թերթում տպելու համար, չի ուղարկում: Խորհրդային արգելքների տարիներին համշենցիները մարդ էին փնտրում պատմելու Ցեղասպանության իրենց պատմությունը, խոսելու իրենց մշակույթից ու բանահյուսությունից: Այսօր դա չկա: Հիմա խնդրում եմ, որ նյութեր ուղարկեն, տպագրեն, շատերն անտարբեր են մնում:

- Ասացիք, որ իսլամ համշենցիների բանահյուսությունը մեռնում է, և որ մենք բաց ենք թողել այդ բանահյուսությունն ունենալու պատմական պահը: Ե՞րբ էր այդ հնարավորությունը, ինչպե՞ս առաջացավ բանահյուսության փոխանցման խզումը:

- 1984-1987 թթ., երբ իմ նախածննդյանս Կենտրոնական Ասիայի՝ Ղազախստանի, Ուզբեկստանի, Ղրղզստանի մահմեդական համշենցիների շրջանում բանահավաքություն էի

անում, դեռ ողջ էին այն մարդիկ, որ իրենց աչքերով Եղեռն էին տեսել, նրանք նաև կարող էին ժամերով հեքիաթ պատմել, առակ, ասացվածք, հանելուկ ասել, երգեր ու խաղիկներ երգել: Այն ժամանակ հավաքեցի որոշ բաներ, բայց դժվարություններ ունեի, քանի որ բարբառը նոր էի սովորում: Իրենք էլ էին զարմանում, երբ լսում էին, որ հայ եմ, համշենցիների եմ փնտրում: Եղեռնի ականատես մի պառապզարմացած ասաց. «Իսեր որդա՞ղ աբրի գուն, փախա՞՞ ին թա» (Սրանք որտե՞ղ են ապրում, մի՞թե փախել են): Հիմա, երբ գնում եմ Թուրքիա, եթե մի քանի խաղիկ ու հանելուկ եմ գրառում, գոհ վերադառնում եմ:

- Բանահյուսությունը գրավոր ժառանգություն չէ, այլ՝ բանավոր: Մի՞թե դժվար է սերունդներին բանավոր փոխանցել, պատմել հեքիաթները, խաղիկները, երգերը, առակները, հանելուկները:

- Համշենցին չի ուզում իր երեխային համշենցիների բարբառն ու բանահյուսությունը փոխանցել:

- Ինչո՞ւ:

- Ինչո՞ւ էին Հայաստանում հայերն իրենց երեխաներին ռուսական դպրոց ուղարկում, տանը ռուսերեն խոսում, ռուսական մշակույթ քարոզում: Հայերենը ապագայում պաշտոններ ստանալու, այսպես ասած, հեռանկարային լեզու չէին համարում: Համշենցիներն էլ մտածում են՝ երեխան Համշենի բարբառով խոսի, այդ հեքիաթներն ու երգերը սովորի, որ վերջում ի՞նչ դառնա, համեստ թեյագործ կամ հովի՞վ: Նա ուզում է երեխան թուրքերեն սովորի, որ Ստամբուլում բարձրագույն կրթություն ստանա: Թուրքերն էլ համշենցիների գյուղերի դպրոցներում քարոզում են, որ համշենցիների լեզուն ու մշակույթը անարժեք են, ոչ ոքի պետք չեն: Հայաստանում, ուր պետական լեզուն հայերենն է, հայերեն գրքեր ու թերթեր են հրատարակվում, հայկական հեռուստաալիքներ կան, իրական հայրենապետներ շա՞տ կգտնես: Իսկ համշենցիներն այդպիսի պայմաններում ինչպե՞ս պահպանեն իրենց ինքնությունը: Մի իսլամ համշենցի ինձ ասաց. «Ես ինչպե՞ս ինձ հայ համարեմ, եթե չգիտեմ մեր ու մյուս հայերի ընդհանրությունների մասին, եթե չգիտեմ ձեր պատմությունը և ոչ էլ իմ պատմությունը գիտեմ»: Ու ես փորձում եմ նրանց վերադարձնել իրենց պատմությունը:

Հարցազրույցը՝ ՄԱՐԻՆԱ ԲԱՂՂԱԳՅՈՒՆՅԱՆի
MediaLab.am

Գլխավոր խմբագիր և համարի պատասխանատու՝ ՍԵՐԳԵՅ ՎԱՐԴԱՆՅԱՆ: Լրատվական գործունեություն իրականացնող՝ «ՀԱՄՇԵՆ» հայրենակցական-բարեգործական հասարակական կազմակերպություն: Հասցեն՝ Երևան-37, Ազատության 2, բն. 8: Հեռախոս՝ (+374+10) 20 21 26: Գրանցման վկայական՝ N 03U054979, տրված՝ 26.06.2002թ.: Խմբագրությունը ոչ միշտ է համակարծիք հեղինակների տեսակետներին: Արտատպության կամ մեջբերման դեպքում իղումը «Ձայն համշենականին» պարտադիր է: Հրատարակվում է 2004թ. օգոստոսից: Տպագրվում է «Տիգրան Մեծ» իրատ. տպարանում: «ДЗАЙН АМШЕНАКАН» (ГОЛОС АМШЕНСКИЙ). Ежемесячная газета Земляческой благотворительной общественной организации «АМШЕН» (г. Ереван), Гл. редактор - СЕРГЕЙ ВАРДАНЯН. Издаётся с августа 2004г. Газета распространяется бесплатно. Тел. 20 21 26. «HAMSHEN» Compatriotic-charitable public organization (Yerevan). «DZAYN HAMSHENAKAN». Issued from August, 2004. Editor in chief SERGEY VARDANYAN. Tel. (+374+10) 20 21 26, E-mail: dzaynhamshenakan@yahoo.com, www.dzaynhamshenakan.org